

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅԹ ՈՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

(Շ-բ-ն-ի. Աբ-բ-ր. 1886 թ. Բ.)

ԳԼ. Ե.

Յակովբ Գ. Զուղայեցու մահից յետոյ Էջմիածնի Մայր Աթոռը երկու տարի թափուր մնաց, որովհետև Էջմիածնի միաբանութեան և ազգի մի մասը կամենում էին Եղիազարին Ս. Էջմիածին հրաւիրելով վերջ տալ նորա առանձինն կաթողիկոսութեան, իսկ այլք պնդու մէին ուրիշին կաթողիկոս ընտրել, կարծելով թէ Եղիազարի Էջմիածնի կաթողիկոս ընտրուելը հաճելի չի լինիլ Պարսից իշխանութեան:

Հուսկ ուրեմն ազգային համաձայնութիւն կայացնելուց և Երևանոյ խանի հաճութիւնը տունելուց յետոյ, Գողթան գաւառի եպիսկոպոս ոմն Պետրոս վարդապետ Երուսաղէմ հրաւիրակ ուղարկուեց: Եղիազար հրաւէքը ընդունելով՝ 1682 թուին ընդ ծով յուղի ընկաւ մեծ շքով գալ Էջմիածին. ժամանելով Կ. Պոլիս՝ Եղիազար տեղւոյն Կրպօ բաբուն (Կարապետ) կոչեցեալ պատրիարքին եպիսկոպոս ձեռնադրեց և Օգոստոսի 22-ին հասնելով Էջմիածին՝ սկսեց վարել ընդհանրական հայրապետական իշխանութիւնը *):

Եղիազար իւր ճարտարարան, յաջողակ և ահարկու բնաւորութեամբ ակնածելի լինելով թէ հայերի և թէ այլազգեաց մօտ, յաջողեց Էջմիածինը պարտքից ազատել՝ պատուելով պարտամուրհակները: Ետա եկեղեցիներ շինեց և վանքեր նորոգեց. նորոգութիւններ արեց Հռիփսիմէի վանքում, Ս. Գայիանէի վանքի առաջը գաւիթ, արևմտեան կողմը միաբանից բնակարաններ շինեց և շորջանակի պորսպեց: Ս. Էջմիածնի տաճարի մէջ Իջման տեղի վերայ քառասուն գմբէթ և պատարագի սեղան կանգնացրեց. և սրպէս զի այդ սեղանի առաջ կատարուած ժամերգութիւնը ժողովրդեան ներս խուժելով չը խանգարուի՝ 2 կանգուն բարձրութեամբ քարէ հաստատուն պատուար շինեց, որ ձգուելով Իջման տեղի առաջի սիւներից դէպ հիւսիս և հարաւ՝ յետին դասը ժողովրդանոցից անջրպետումն: Տաճարի հիւսիսային և հարաւային կիսաբոլորակները բարձրացնելով՝ սեղաններ հաստա-

(*) Զաքարիա սարկ. հատ. Բ. եր. 106, Զամբո եր. 25—26.

տեց: Հարաւայինը երեք աստիճաններով նուիրեալ յանուն Ա. Յոյհաննու Արապետի, ուր դրվումէ ապակեղարդ գմբէթաւոր գորոցի մէջ Ա. Միւռոնի կաթսան, իսկ հիւսիսայինը՝ եօթն աստիճաններով յանուն Ա. Ստեփաննոս Նախասարկաւազի, ուր բեմի վերայ բազմած հայրապետը կատարումէ եպիսկոպոսական ձեռնադրութեան կոչումը*): Հիւսիսային հարաւային և արեւմտեան կիսաբոլորակների վերայ մի մի փոքր, բայց գեղեցիկ գրմբէթներ և ս շինեց:

Մինչ եպիսկոպոս Եջմիածնում այս բարեկարգութիւններով և շինութիւններով էր զբաղուած՝ Մարտիրոս Աաֆայեցի հուսկ ուրեմն 1683 թուին ստացու Երուսաղէմայ պատրիարքութիւնը, բայց գնալով Երուսաղէմ սահաւ ժամանակից յետոյ տեղւոյն Յոյն պատրիարքի հետ գժտուեց ու նորա հետ միասին գնաց Ադրիանօպօլիս եպարքոսի ատեանը, ուր պարտաւորուեց և Յոյն պատրիարքը միայն ղիջանելով իւր վաղածանօթ Երեմիա չէլէպիի թախանձանացը՝ յետկացաւ իբէժինդրութիւնից: Մարտիրոս Աաֆայեցի Երուսաղէմ վերադառնալիս՝ Եգիպտոսում վախճանուեց նոյն 1683 թուին:

Աաֆայեցու մահուամբ թէ Երուսաղէմայ և թէ Կ. Պօլսոյ Հայոց պատրիարքութիւնը խաղալիկ և յափշտակութեան առարկայ մնացին շահասէր և փառամոլ անձանց ձեռքին: Մինչև աշխարհական անձինք անգամ յաւակնութիւն ունեցան երկու աթոռոց և ս պատրիարքական իշխանութիւնը գրաւել: 1683 թուից սկսեալ Պօլսոյ պատրիարքութեան իշխանութիւնը յափշտակուեց Կրպօ բարունուց և հետ զհետէ գրաւեցին—Եջմիածնի նուիրակ ոմն Աաֆանցի Նիրեմ վարդապետ, դարձեալ Կրպօ բարուն (Աարապետ),

(*) Հաւանական է որ այդ սեղանների աստիճանները խորհրդով շինուած լինին: Եպիսկոպոսացուք և վկայք հարաւային երեք աստիճանեայ սեղանի առաջից կոչվումն դէպի եօթն աստիճանեայ բեմը, ուր հայրապետն է աթոռի վերայ բազմած արծուենկար օթոց ընդ ոտիք, ինչան՝ թէ նուիրեալը պէտք է տիեզերական նախկին երեք ժողովոց վարդապետութեան հետեղ և դաւանող լինի որ եկեղեցւոյ եօթն կարգերը անցնելով թեակոխէ դէպի եպիսկոպոսական աստիճան, արծուոյ նման բարձրաթոռիչ լինելու և ի բարձանց սրատես աչօք դիտելով իւր հօտը, ըստ աւետարանական վարդապետութեան և ըստ սահմանաց տիեզերական երեք ժողովոց յանձանձելու համար:

ումն Թորոս Կրէյ, Խաչատուր Ճլեցի, և աշխարհականներ՝ տեղակալ անուամբ, Սաղայ օղլուն և ումն Շահին: 1692 թուին Պօլսոյ պատրիարք կարգուեց Սարի կոչեցեալ Մաթթէոս Ահսարացի, որ Կրկամեայ պատրիարքութիւնից յետոյ ի կենդանութեան Սոյ Աստուածատուր կաթուղիկոսի՝ Սոյ կաթուղիկոսութիւնը գրաւեց, որով դարձեալ Կ. Պօլսոյ պատրիարքութեան ասպարէզը մնաց Այսփանցի Եփրեմ վարդապետին:

Կարծես բաւական չէին այս խռովութիւնները, կաթողիկոսութիւնը մուտ գործելով հայ ընտանիքի մէջ՝ կաթողիկէ կղերի ձեռքով սլէկածոււմէր հայ ժողովրդեան: Հայք նախանձախնդիր ազգային մայր եկեղեցու ամբողջութեան՝ յախուռն եռանդեամբ հալածումէին կասկածեալներին և քանի ստիպումէին միանալ եկեղեցու ամբողջութեան: Հերձեալներից ոմանք յամուռութեամբ զիմացրումէին, հալածանք և մահ սնգամ՝ յանձն առնելով: Եղիազար կաթուղիկոս Երեմիա չէլէպի գրութեամբ*) և այլ հաւատարի ազգիւրներից իմանալով Կ. Պօլսոյ Հայոց այս աղետալի գրութիւնը, մինչ պատրաստումէր խելահաս ու խոհական մարդիկ ուղարկել Կ. Պօլիս, 1691 թուին օգոստոսի 8-ին վախճանուեց և թաղուեց Ս. Գայիանէի վանքի իւր շինած գաւթի աջ կողմը:

Եղիազարին 1691 թուին յաջորդեց իւր աշակիրտ Նահապետ Երեսացին, որ Եղիազարի սէս ահարկու և ակնածելի էր ըստրին**): Նահապետ ի հիմանէ շինեց Վաղարշապատու Ս. Շողակաթի վանքը. Հրազդան գետից ստորերկրեայ ջրանցքով (գալմա)

(*) « Ոչ զոյ ի ժամանակիս իշխան մարգարէ. և հոգևոր Տէրդ հեռի է ի մէնջ. և ոչ որ ծանուցանէ ըստ Աստուծոյ զեղեալ անկարգութիւնս, որ ի վերոյ ասացաւ՝ վասն եպիսկոպոսութեան և վասն Երուսաղէմի վիճակին մերոյ: Ապա ո՛ր դիցուք աստանօր եկեալ հասեալ հեռ և նախանձ և վրդովումն նոր ի մէջ Հայոց. յորմէ և գայթակղութիւն բազմաց, կաթողիկէ և հերձուածող, ֆոէնկ և հայ շնշնջելով՝ հանդերձ այլովք աղջատանօք. և կատարածն ո՛ր գիտէ ո՛ր նկատելոց է և դազարելոց, որոյ եղև առիթ Սարգիս ոմն Թոխատեցի: Մեր զմեր ցաւն ունէաք. և արդ զսկիզբն երկանցն կասկածեալ՝ շուարեալ մնամք. մինն օրհնէ, միւսն անիծանէ և երրորդն որ չար ևս է, ի հաւատոց զմեզ հանէ »: Թուղթ Երեմիայ չէլէպոյ գրեալ առ Եղիազար կաթուղիկոս ի 1690 թիւ. տես Չամչեան Գ. հատ. եր. 722:

(**) Զաքարիա Սարկ. հատ. Բ. եր. 106 և 136, Զամբա եր. 26—27:

ջուր հանեց դէպի Եջմիածնի արտորայքը՝ շինեց Յշակոսանայ կամուրջը և Երևանայ Զորագետի անապատը՝ նորա շրջապատը ընդարձակելով։ շատ լճերի և եկեղեցիների շինութեանց և վերանորոգութեանց պատճառ գործաւ։

Այսպիսի մեծագործութիւններով Նահապետ թէև մեծ հռչակ և ստացած լինէր, բայց իւր խտասրտութեամբն հոգեւորականների մէջ շատ հակառակարգներ ունեցաւ, որոնք Նախիջևանայ և Գողթնեաց եպիսկոպոսների հետ միանալով՝ Կարբեցի Բաթրապեն մականուանեալ Մատթէոս անուն վարդապետի ձեռքով մի ամբաստանագիր ուղարկեցին Նոր-Չուղայու առաջնորդ Ստեփաննոս վարդապետին՝ ամբաստանելով թէ, Նահապետ խանգարել է եկեղեցու օրէնքներն ու կարգերը, և առանց կանոնի ու գրոց վկայութեան անուամէ ինչ որ կամենումէ, խնայումէին նոյն Ստեփաննոս վարդապետին ասելով. «դու եկ և մեզ կաթուղիկոս եղիր, և մենք քո հրամաններին կը հնազանդենք, թերևս ուղղուեն մեր կարգը ու կրօնքը»։

Ստեփաննոս Չուղայեցի այս թուղթը ընդունեց և թղթատար Մատթէոս վարդապետի բանասրկութեանց անսալով մեծ ծախսերով ստացաւ կաթուղիկոսութեան հրովարտակ և մինչև իւր Եջմիածին ժամանելը՝ իւր աշակերտ Չուղայեցի Աղէքսանդր վարդապետին տեղապահութեան իրաւամբ ուղարկեց Եջմիածին, պատուիրելով ծաթ և ուղարկել Նահապետ կաթուղիկոսին։ Բայց Նահապետ կաթուղիկոս փոխանակ ծաթ և զնալու՝ խոյս տուեց դէպի Դալլէթ և ապա ինելով Շահ-Օջաղին, որ ըստ Պարսից սովորութեան անձեռնմխելի էր, իւր բարեկամների և յատկապէս հաւատուրաց և շահի սիրելի Չուղայեցի Աւետիս անուն մի մարդի միջնորդութեամբ նորից կաթուղիկոսութեան հրովարտակ ստացաւ, եկաւ Եջմիածին և Երևանայ խանի ձեռքով Ստեփաննոսին՝ նորա տան ամենայ իշխանութիւնից յետոյ բանտարկել տուեց։ Բանտի անձկութեան և տառապանքներին չրկարողանալով տանել՝ վախճանուեց Ստեփաննոս Չուղայեցի 1698 թուին և իւր կողակին համեմատ թաղուեց Խոր-Վիրապի վանքում։*)

(*) Է. Զամչեան հատ. Գ. գլ. Խ. ասնելով անորոշ «Յիշատ. Թուղթք. Պատմ.» աղբիւրներից՝ երկարօրէն գրումէ որ, իբր թէ Նահապետ կաթուղիկոս սիրով հերքնկալելով Յիսուսեան կարգի կրօնաւորներից ոմանց և

Մինչ Նահապետ կաթուղիկոս 1697 թուին վերստին Եջմիածնի կաթուղիկոսութեան իրաւունքն ստացած շինութեամբ էր զբաղվում՝ Տաճկաստանի հայք խուռովութեամբ և շփոթութեամբ ալէկոծվումէին և Պօլսոյ և Երուսաղէմի պատրիարքական իշխա-

նոցանից տեղեկանալով թէ, իւր սէրն ու հպատակութիւնը դէպի պապը կասկածելի է դարձել, շատ ցաւումէ, ուստի և սիրոյ ու հպատակութեան թուղթ գրելով պապին՝ խնդրումէ ինամբ և սէր ցոյց տայ այնտեղ պատահած հայերին՝ ինչպէս ինքն ցոյց է տալիս իւր մօտ պատահած լատիններին, Ըստ Հ. Չամչեանի որպէս թէ այս թուղթը Հոռով հասնելուց յետոյ խոռվասէր ոմն գալով Եջմիածին դրդումէ միաբաններին գահընկէց անել Նահապետին՝ ասելով թէ, Նահապետ կամենումէ ազգը լատինացնել, և որպէս թէ այդ խոռվասէր ոմնը դրդած լինի ի տեղի Նահապետ կաթուղիկոսի՝ Ստեփաննոս Զուղայեցուն կաթուղիկոս կարգել, իսկ Ստեփաննոս իւր բանտարկութեան ժամանակ և Պօլսոյ Եփրեմ պատրիարքին գրած լինի թէ Նահապետ լատինամոլ է, Հ. Չամչեան յայտնի նպատակով միշտ տըքնումէ հայ հայրապետներին լատինամոլ և լատինամիտ ներկայացնել, իսկութիւնը նորա գործը չէ, Զաքարիա սարկ. որ ժամանակակից էր Նահապետ կաթուղիկոսի, նորա անկման պատճառը նորա խստասրտութեամբ վարուիլն է համարում, ուստի և գրումէ Եղիազարի ու Նահապետի մասին.

« Այս երկու կաթուղիկոսաց ի ժամանակի շինեցաւ և նորոգեցաւ բազում վանորայս և եկեղեցիս, Սոքա առնուն հրաման յիշխանէն վասն շինութեան եկեղեցեաց, Բայց զկարգ և զկանոն առաջին կաթուղիկասացն քայքայեցաւ ի սուրբ Աթոռոյն և յամենայն վանորէից, վասն թոյլ տալոյ նոցա. զի ամենայն առաջնորդք ըստ կամաց իւրեանց առնէին. և կաթուղիկոսաց ոչինչ լինէր փոյթ. զի ինքեանք զոր ինչ յիւրեանց աշխարհին (ի Տաճկաստան) վարեալ էին. զնոյն և աստ առնէին, Այլ և զոր ինչ պակասութիւն տեսանէին արեղայից և երիցանց, բերեալ գերծէին զգլուխսն և զմուրուսն. և բրածեծ առնէին մահու չափ, Եւ այսպէս կային ի ժամանակս կենաց իւրեանց » (Հատ. Բ. եր. 107. և 136—138) և գրելով այս, ամենեին չէ յիշում թէ Ստեփաննոս թուղթ գրած լինի ո՛ւր և իցէ, Թամանակակից Աւետիք պատրիարքը եզուիտների հսկողութեամբ գրած իւր ինքնագիր կենսագրութեան մէջ Նահապետի շինարարութիւնը յիշելով յաւելցնումէ միայն. « բայց կարգալոյ և յօրինաց թոյլ էր ». եթէ մի թեթեւ կասկած լինէր Նահապետի լատինամոլութեան՝ յայտնի է թէ եզուիտները ո՛րպիսի դրուատներ գրել կը ներշնչէին իրանց ճիրաններում նշաւակ եղած Աւետիք պատրիարքին (Ինքնագիր կենսագրութիւն Աւետիք պատրիարքի հրատարակութիւն հանգ. Ե. Գիւլօրէի, տես Արարատ 1874 թ. եր. 113—115)։ Սիմէօն կաթուղիկոս առանց մի պատճառ յիշելու՝ ասումէ « Ապա ՌճԽԳ թուոյն ի չորրորդում ամի կաթուղիկոսութեան նորին (Նահապետի)՝ Զուղայու առաջնորդ Ստե-

նութեան հետամուտ փառասէր և խռովայոյզ անձանց ձեռքով: 1698 թուից մինչև 1700 թիւը երկու տարուայ ընթացքում պատարիարքութիւնը յափշտակուելով Եփրեմ վարդապետից, գրաւեցին Մեղքխէթ Սուպչի և Մխիթար Կորզուացի կամ Քիւրդստան:

Փաննոս վարդապետն թագաւորական գրով ելեալ ի Քուղայէ՝ գայ Եջմիածին և նստի կաթուղիկոս, և զՆահապետն ընկենու (Ջամբո եր. 27), և Յով. Եպիսկ. Շահխաթունեան թերևս և. Չամչեանից առնելով գրումէ որ Նահապետ գահընկէց լինելուց յետոյ աքսորուել է Սեան. և թէև պապի հետ յարաբերութիւն ունենալու մասին ոչինչ չէ գրում պատմութեան մասումը (Ստոր. Կաթ. Էջմ. հատ. Ա. եր. 223—224), բայց հետեւելով Չեամչեանին՝ Էջմիածնի տաճարի յետին դասու կաթուղիկոսարանը համարումէ Հոովմայ Իննովկինտիոս պապի ուղարկած ընծայ աթոռը (Ստոր. Կաթ. Էջմ. հատ. Ա. եր. 43), Ջարմանք որ Հանգ. բազմարդիւն Շահ—Խաթունեան ձեռքին ունենալով Ջաքարիա ականատես պատմչի պատմութիւնը, Ղազար Ջահկեցու «Գրախտ ցանկալի» գիրքը (եր. 606) և Սիմէօն կաթուղիկոսի Ջամբոը, միայն և. Չամչեանին է հետեւել, Ըստ իս, պապի՝ Նահապետ կաթուղիկոսին Աթոռ ուղարկելը, և ոմանց այդ աթոռը՝ յետին դասու քանդակեալ ընտիր զրուագներով կաթուղիկոսարան համարելը, միայն արդիւնք է ենթադրութեան՝ հիմնուած Չեամչեանի անորոշ աղբիւրներից քաղած պատմութեան, Թող որ ականատես պատմիչ Ջաքարիան և ժամանակակից Աւետիք պատրիարքն ու Ղազար Ջահկեցին ոչինչ չեն գրում այս մասին, —նոյն ինքն կաթուղիկոսարանի արևելեան ճաշակով շինուածքը և ծածկոյթի Ս. Էջմիածնի գմբէթներին յար և նման վերջաւորուիլը յայտնի ապացոյց են հայ սրտաբուղի և ջերմեռանդն զգացման դէպի Ս. Էջմիածին, (Այդպիսի զգացման ապացոյց է Աւհարանի Ծաղկեալ Գահ—լիճում եղած փայտեայ գեղեցիկ զրուագներով քանդակագործ Աթոռը, որի յենարանի բոլորակի մէջ գրուած է «Բարձր առնէ Տէր զեղջիւր օծելոյ իւրոյ», «Յիշատակ ի տիկին Ովսանն Յարութիւն Կիրակոսէ առ Աթոռն սրբոյ Էջմիածնի, ի Մադրաս. 1837»):

Այս կաթուղիկոսարանի հիւսիսային կողին յարտաքուստ կուսէ կենդրօնից դէպի ձախ զուգահեռարար հաղիւ ընթեռնլի կայ «Պետրոս եպիսկոպոս» անունը, Առաջին դասի կաթուղիկոսարանը չի կարող Հոովմայ քահանայապետինը լինել, թէև ծածկոյթը և վիրայի փոքրիկ արձանները հայկական չլինին, որովհետև յիշատակարանից յայտնի է, որ այդ կաթուղիկոսարանը 1170 թուին Հայոց (1721 թ.) պատրաստել և ընծայել են Ակնեցի Մահատեսի Մինասի որդի Սեղբոսը և Կարմրկապցի Նազարի որդի Առաքելը, Մարտիրոսը և Յարութիւնը, հոգաբարձութեամբ Յովհաննէս և Պետրոս վարդապետաց, ուոց յիշատակը օրհնութեամբ լինի:

Յետին դասու կաթուղիկոսարանը կամ այն է որ դարձեալ սոյն Պետրոս

ցի, դարձեալ Մեղքիսէթ Առաջի՝ Ադրիանուպօլսոյ առաջնորդ կարգելով Ղափանցի Նփրեմ վարդապետին՝ որ առաւել քան չափն նստանձայու թեամբ Հոյսարտանեայցս եկեղեցւոյ՝ հալածանք սկսեց նոցա դէմ՝ որոնց մասին կասկած կար թէ լատինամիտ են:

Նփրեմ, ժողովուրդը Մեղքիսէթի դէմ գրգռելով և նորան ֆռանգացեալ ամբաստանելով նորան՝ եպարքոսի հրամանով պատրիարքութիւնից ձգել և ի ծառայութիւն թիոյ դատապարտել տուեց, և գրաւելով Կ. Պօլսոյ պատրիարքութիւնը, Կ. Պօլսոմ փոխանորդ կարգեց, ու ինքն մնաց Ադրիանուպօլսոմ: Ժողովուրդը Մեղքիսէթեան և Նփրեմեան բաժանուելով սկսեց յուզուել և միմեանցից իրէ ժ առնելու համար միմեանց մասնել որպէս լատինամիտ և եւրոպացւոյ լրտես. երկպառակութիւն, խռովութիւն, սքսոր ընտանեկան անհամաձայնութիւններ ալէկոծու մէին ժողովրդեան Կղեմէս Գալանոսի և նորա հետեորդ լատին քարոզիչների սերմանած որոմների շնորհիւ:

Այս խառնաշփոթ ժամանակին Մխիթար Սերաստացին ևս, որ Ղալաթիոյ Ա. Առևտուորից եկեղեցու սենեակներից մէկում ընտելութիւն էր հաստատել, որպէս լատինամիտ հալածանքի ենթարկուեց. հալածանքի ենթարկուեցին նաև պրօպագանդայի դարաստան աշակերտեալ Կարնեցի Խաչատուր վարդապետը և Ասորւոյ Պետրոս կաթողիկոսը, որ իբրև ջատագով լատինամիտների՝ սքսորուեց Ադանայի բերդը, ուր և վախճանուեց:

Վարդապետի ջանքով է շինուած, կամ շինել տուել ու նուիրել է Մայր Աթոռին Անհարանի Ծաղկեալ Գահլճի ճակատին գրուած Աթոռը նուիրողի պէս մի Հնդկահայ, Վասն զի երկուսի ևս թէ փայտը և թէ նկարները նման են միմեանց, Այս կաթողիկոսարանը միջի կողմը ունի յիշատակարանի համար տեղ՝ առանց որ և է գրուածքի:

Հայր Գարեգին վարդապետ Սրբանձտեանի խմբագրած «Մանանայ» պատուական գործին կից մի, սկզբից և վերջից թերատ, ժամանակագրութեան մէջ ևս թէև յիշուած է. թէ Հռովմայ պապը նահապետ կաթողիկոսին ընծայ առաքեաց զարմանալի աթոռ մի, և պատուական խալիչայ մի, և ազնիւ գաւազան, որք էին յոյժ մեծագին և անտես մարդկան . . . եր. 350. սակայն այդ ժամանակագրութիւնն ևս գրուած լինելով Ղուկաս կաթողիկոսի ժամանակով, թերևս և յետոյ, ըստ իս՝ Չամչեանի արձագանք պէտք է համարել:

Այս խաւովութեան ժամանակ Երզնկայի եպիսկոպոս Աւետիք փարգապետը շէյխ - իւլ - իսլամից, որ Երզնկայի լինելով իւր վաղածանօթն էր, Կարնոյ կուսակալի ձեռքով գիր ստացաւ շտապել Կ. Պօլիս, ըստ Հայ ժողովրդեան ցանկութեան պատրիարքական իշխանութիւնը ստանձնելու:

Աւետիք փարգապետը այս հրաւերքի համար Նահապետ կաթողիկոսի հաճութիւնը խնդրեց, իսկ Նահապետ կաթողիկոս նորան պատրիարքութեան կոնդակ տալուց յետոյ՝ մի մի օրհնութեան կոնդակ ևս տուեց Ազրիանուպօլսոյ և Կ. Պօլսոյ քահանայից և ժողովրդեան անունով:

Աւետիք 1701 թուին հասնելով Կ. Պօլիս, և այնտեղից ևս Ազրիանուպօլիս՝ ստանձնեց պատրիարքական իշխանութիւնը և սկսեց տիրաբար փարուել, պաշտպան ունենալով Երզնկայի և իւր վաղածանօթ շէյխ - իւլ - իսլամին: Պատրիարքութեան թիկնածու Աւփանցի Ափրեմ փարգապետին էջմիածին աքսորել տուեց, ժողովրդեան համակրութիւնը վաստկելու համար լատինամիտ կարծեցեալ քահանաներին և ժողովրդոց աքսորանքից ու պատժապարտութիւնից ազատել տուեց. սէր և խաղաղութիւն քարոզելով եսիրոյ ու խաղաղութեան շրջաբերականներ ուղարկելով ամենայն տեղ բաւական կուսակիցներ և համակրողներ վաստկեց. շտաբրին, որոնք իրանց օրինաւոր կնոջ կենդանութեամբ երկրորդ կին ևս էին առել ստիպմամբ երկրորդ կինը արձակել տուեց, և սպա ընդունեց ի հաղորդակցութիւն եկեղեցւոյ:

Աւետիք պատրիարք մինչ իւր այս վարմամբ ընդհանուր համակրութիւն էր վայելում, Երուսաղէմից 12 փարգապետներ գալով՝ բոլոր բարձին առ եղարքոսն թէ, տեղւոյն Մինաս պատրիարքը և կեղեցական իրեղէնները և սուրբ սպասները ոմանց պօլսեցւոց միջնորդութեամբ և անգղիացւոց դեսպանի ձեռքով անգղիացի վաճառականի մօտ գրաւ է գրել և վաճար 100,000 զուրուշ պարաքի ենթարկելով՝ ստիպումէ միաբաններին իրանց հաշուում սպրել: Ապարքոսը գործի քննութիւնը յանձնեց Աւետիք պատրիարքին. քննութեան ժամանակ Մինասի անպայման պաշտօնանկութիւնը պահանջուելով ոմանք Կայծակի կոչեցեալ Գալուստ փարգապետին կամեցան Երուսաղէմաց պատրիարք կարգել, ոմանք երբեմն Սոյ կաթողիկոս Սարի Մատթէոսին, որին Աեարոս Բերիացի, Սոյ կաթողիկոսութիւնը յափշտակելով հեռացրել էր Սից. գեա.

երկու կուսակիցները միժու մէին, արքունի հրամանով Երուսաղէմայ պատրիարքութիւնն ևս 1701 թուին Աւետիքին յանձնուեց:

Աւետիք Երուսաղէմայ փոխանորդութիւնը սկզբում յանձնեց մի աշխարհականի, բայց յետոյ Յովհաննէս վարդապետ Ամասիացուն կարգելով Երուսաղէմայ փոխանորդ, իսկ Յովհաննէս վարդապետ Զմիւռնացուն՝ Կ. Պօլսոյ, ինքն մնաց Ագրիանուպօլսում և սկսեց հալածանք լատինամիտների դէմ: Իւր փոխանորդը նոյն հալածանքը Կ. Պօլսում սկսեց աւելի չափազանցութեամբ:

Մխիթար Աերաստացին այս հալածանքից ազատուելու համար եղուխտ կրօնաւորաց վանքում ապաստան գտաւ և իոյս տալով Մոռա թերակղզին այնտեղ պապի գերիշխանութեան տակ մի վանք շինեց և 1712 թուին յանուն Ս. Անտօն Աբբայի Բենեդիկտեան կարգի կանոնադրութեամբ Մխիթարեան միաբանութիւնը հաստատեց: Մոռան Վենետիկ հասարակապետութիւնից գորս գալով Օսմանեան իշխանութեան ենթարկուելուց յետոյ, Մխիթար 1715 թուին իւր աշակերաններով փոխադրուեց Վենետիկ և 1717 թուին Վենետիկ հասարակապետութիւնից Ս. Ղազար կղզին ստանալով՝ այնտեղ հաստատեց իւր միաբանութիւնը, նպատակ դնելով ծաղկեցնել հայ դպրութիւնը և լռելեայն պապականութեան քարոզ դառնալ: Այս միաբանութիւնը յայսօր գոյութիւն ունի բարգաւաճեալ մտաւոր և նիւթական հարստութեամբ:

Մինչ հայ պատրիարքները զբաղուած էին հալածելով լատինամիտներին, նոցանից ոմանք լռիկ գործ էին կատարում. ինչպէս Մխիթար Աերաստացին հաստատեց Մխիթարեան միաբանութիւնը, այնպէս ևս Բերիացի Յակոբ քահանայ Յովսէփեան և Աբրահամ Աթար վաճառականները, 1705 թուին առանձնանալով Կիրանան՝ պապի յանձնարարականով տեղւոյն Մառոն պատրիարքի և իշխանի հաճութեամբ մի տուն և մի փոքր արտ ստացան. և Մառոն կրօնաւորաց կարգին համեմատ վանք հաստատեցին: Այս վանքը հետզհետէ ընդարձակուելով 1740 թուին դարձաւ Կիրանանեան կաթողիկէ Հայոց կաթողիկոսական աթոռ և առաջին կաթողիկոսն եղաւ Բերիոյ եպիսկոպոս Աբրահամ, որ ազատուելով հայ պատրիարքների հալածանքից՝ Բերիոյ հայ կաթողիկէ ժողովրդից 1740 թուին կաթողիկոս ընտրուեց և անձամբ զնալով Հռոմ Կիրանանու հայ կաթողիկէ միաբանութեան կաթողիկոսութիւնը

տասացաւ: Այս կաթուղիկոսութեան իրաւունքը 1868 թուին Կ. Պօլսոյ կաթողիկէ Հայոց պատրիարք Անտօն—Հասուն միացրից, ու ինքն դարձաւ կաթուղիկոս Արքանանու և պատրիարք կաթողիկէ Հայոց Տաճկաստանի:

Աւետիք և իւր փոխանորդ Զմիւռնիացի Յովհաննէս վարդապետը իրանց հակառակորդների և յատկապէս լատինամիտների պաշտպան գաղղիացւոց դեսպանի ազդեցութեամբ 1703 թուին պաշտօնանկ եղան: Կ. Պօլսոյ պատրիարք կորգուէց Քալուստ վարդապետ Վայծակ կոչեցեալ, որ Երուսաղէմայ փոխանորդ կարգեց Սոյ երբեմն կաթուղիկոս Պիճակ կոչեցեալ Գրիգորին:

Աւետիք թէ և պաշտօնանկ լինելով 51 օր Կ. Պօլսոյ Եղգի - Գուլէ ամրոցում բանտարկուէց և աքսորուէց Այրաս կոչեցեալ կղզիին: Բայց իւր անխոնջ բարեկամների շնորհիւ ազատուէց և 1704 թուին նորից ստանձնեց պատրիարքութիւնը, որ դրաւել էր Կ. Պօլսիցի ոմն Ներսէս վարդապետ՝ իւր համախոհների գլուխն անցնելով և Քալուստին պաշտօնանկ անելուց յետոյ՝ անձին համար միայն հոգալով:

Սակայն Աւետիք այս անգամ ևս երկար և խաղաղ չը կարողացաւ վարել պատրիարքական իշխանութիւնը. իւր հակառակորդների յամառութեամբ, իւր պաշտպան Նրզնկացի շէյխ—Իււլիլամի անկամբ և Քաղղիացւոց դեսպանի ազդեցութեամբ դարձեալ պաշտօնանկ եղաւ 1705 թուին, և ոչ այսչափ միայն, այլ և աքսորուելով Կիպրոս կղզին՝ Քաղղիացւոց դեսպանի խարգաւանքով փոխանակ Կիպրոս ուղևորելու. կաշառուած նաւապետը նաւեց դէպ Քաղղիա: Նաւը Սիկիլիոյ Մեսենա նաւահանգիստը հասաւ թէ ոչ՝ Քաղղիոյ փոխ-հիւպատոսը Աւետիք պատրիարքին Հաւատաքննութեան (Ինկիլիզիցիայի) բանտում պահեց, մինչև Փարիզից կարգադրութիւն լինելը, այնուհետև Աւետիք փոխադրուէց Վարսիլիա, ուր Թիարանի տեսուչը նորա մօտ գտնուած բոլոր թղթերը առնելով՝ բանտարկեց նորան:

Հայք ի զուր խնդրակներ կարգեցին Միջերկրական ծովի նաւահանգիստներում Աւետիք պատրիարքի հետքը գտնելու, որովհետև Աւետիք ոչ ևս Աւետիք, այլ Երկաթէ գիմակով մարդ անուամբ՝ փոխադրուել էր Քաղղիոյ միւս ծայրը Սուրբ Միքայէլի (Ուէն - Միշէլ) վանքը, որ Բենեդիկտեան կրօնաւորների սեպհականութիւն լինելով հանդերձ՝ այն ժամանակ պետական

բանտի տեղ էր ծառայում: Աւետիք երեք տարի այս վանքում փակուելուց, յետոյ Փարիզ՝ Բաստիլլի քերպը փախազրուեց, և Հինգ տարի յամառութեամբ հաւատարմանութեան բոլոր մերենայութեանց զխնայրելուց յետոյ՝ 1710 թուին Աեպոսեմբեր ամսին իւր մայրենի հաւատը ուրանալով՝ շղթաներից ազատուեց և տարին չորրորդրո՞ւ 1711 Յուլիսի 11 - ին փախճանուեց *):

Աւետիք պատրիարքի արքայման տարին, 1705 թուին Յունիսի 13 - ին փախճանուեց Նահապետ կաթողիկոս և թաղուեց իւր շինած Շողակաթի վանքի գաւթում՝ հիւսիսային կողմը: Նահապետին՝ Էջմիածնում 1706 թուի Գեկտեմբերին յաջորդեց Աղէքսանդր Ա. Զուղայեցի. իսկ Աւետիքից յետոյ 1705 - 1707 Կ. Պօլսոյ և Երուսաղէմայ պատրիարքական աթոռները գրաւեցին Մատթէոս Սարի՝ ազգեցութեամբ Գաղղիացուց գեոպանին՝ 2 ամիս: Մարտիրոս վարդապետ Քիւլհանջի՝ չորս ամիս: Միքայէլ երէց 8 ամիս, և Սահակ վարդապետ Ապուշեխցի՝ 8 ամիս:

Կ Լ Զ.

Աղէքսանդր Ա. Զուղայեցի հմուտ փանտկան կարգերին, տեղեակ Աստուածաշունչ Սուրբ գրոց և այլ շինարար՝ սկսեց սիրով և խաղաղութեամբ յանձնաձեռնել Էջմիածնի միաբանութեանը. Էջմիածնի մէջ պէտպէս նորոգութիւններ արեց, ձմեռան սեղատունը շինեց և Էջմիածինը հարստացրեց զանազան կահ կարասիներով, սուրբ անօթներով ու սպասներով և պէտպէս կալուածներով, եկեղեցիքը պայծառացրեց կարգ կանոններով և ողջամիտ վարդապետութեան զպրոցներով. միշտ ընդդէմ սրապականութեան մնաց, թէ ի վարդապետութեան և թէ ի կաթողիկոսութեան**):

(*) Ինքնագիր կենսագրութիւն Աւետիք պատրիարքի. հրատարակութիւն Հանգ. Եգ. Գիւլօրիէի և յառաջարան հրատարակչին. տես Արարատ 1874 թիւ Ա. Բ. Գ. Դ. Ե.

(**) Ղազար Զահկեցի (Գրախտ ցանկալի եր. 606), որ Նահապետ կաթողիկոսի մահից 33 տարի յետոյ կաթողիկոսացաւ, իւր ի վարդապետութեան գրեալ «Գրախտ ցանկալի» գրքի մէջ Հայ հայրապետներին դէպի Հոռովմայ պապը, իւր ժամանակակից Նահապետ կաթողիկոսից մինչև Արարատ Մշեցի՝ Հ. Չամչեանի ենթադրածին բոլորովին հակառակ զգացմամբ է ներկայացնում:

Եւ այսպիսի արդիւնաւորութեամբ 8 տարի վարելով հայրապետական իշխանութիւն՝ 1714 թուին նոյեմբերի 22 - ին վախճանուեց և թաղուեց Մայր Տաճարի արեւմտեան դրան աջ կողմը՝ Զանգակատան տակ, և յաջորդեց Աստուածատուր Ահմատանցին:

Մինչ Աղէքսանդր Ա. Զուղայեցի էջմիածնի շինութեան և վանորէից բարեկարգութեան համար էր հոգում՝ Վ. Պօլսում Աւետիքեանների ջանքով Յովհաննէս վարդապետ Զմիւռնիացի 1707 թուին գրաւեց պատրիարքական իշխանութիւնը, և սկսեց Աւետիքից աւելի ևս խստութեամբ ու եռանդով հալածել լատինամիտներին: Այս հալածանքի ժամանակ 20 անձինք բանտարկուեցին: Բանտարկեալներից ինն անձինք, Մատթէոս Սարի ու Կոմիտաս քահանայ Քէօմիւրճեան մահուան դատապարտուեցին, և մահմտականութիւն ընդունելով մահից ազատուեցին, բացի Կոմիտաս քահանայից՝ որ գլխատուեց, և որի մարմինը յոյնք թաղեցին: Իսկ Քաղիլացւոց դեպանը յոյներից ծանր ընծաներով յետստանալով թէ գլուխը և թէ մարմինը՝ ուղարկեց Քաղիլա:

Յովհաննէս Զմիւռնիացի մի տարի հազիւ կորոզացաւ վարել պատրիարքական իշխանութիւնը, 1708 թուին պաշտօնանկ եղաւ և յաջորդեց դարձեալ Աահակ վարդապետ Ապուշեխցին, որ չորս տարի խաղաղութեամբ վարեց իւր իշխանութիւնը, բայց տեսնելով որ լատինամիտները յայնմապէս սկսել են լատինաց եկեղեցիքը յաճախել, նորոգեց հալածանքը, մինչև որ ինքն և ս 1714 թուին ամբաստանուելով թէ ի ծածուկ ֆռանկութիւն է անում, սչ միայն պաշտօնանկ եղաւ, այլև արքորուեց:

Հասարակ ժողովրդեան ցանկութեամբ 1714 թուին պատրիարք կարգուեց Քանձակեցի Յովհաննէս վարդապետը, որ դարձեալ սկսեց շարունակել իւր նախորդների հալածանքը լատինամիտների դէմ, մանաւանդ այն ժամանակ երբ լատին եպիսկոպոսին առաջարկեց ջրվրդովել հայ եկեղեցւոյ խաղաղութիւնը—դէպ ինքն և դէպի լատին եկեղեցին հրապուրելով հայ քահանաներին և ժողովրդեան, իսկ լատին եպիսկոպոսը բացասական պատասխան տուեց: Մինչև անգամ լատին եպիսկոպոսը թոյլ տուեց որ լատինամիտները առաջնորդութեամբ Աէրտինի կամ Մամաոյ Մելքոն եպիսկոպոսի խորհուրդ կալմել իւր մօտ. իսկ լատինամիտների այս ժողովը նախագահութեամբ լատին եպիսկոպոսի սրօշեց, Ա. որ լատինամիտները Օսմ. կառավարութեան մօտ առանձին կրօնական

Համայնք ճանաչուին Հայոց պատրիարքարանից անկախ՝ առանձին պատրիարքով, Բ. որի կամ Հայ եկեղեցիներից մէկը ստանան եկեղեցական պաշտամունք կատարելու ըստ լատին վարդապետութեան կամ նոր եկեղեցի շինեն. և Գ. որի սահմանեն առանձին գանձանակ, գոյացած՝ դրամներով եպարքոսի կամքը շահելու յիշեալ արտօնութիւնները ձեռք բերելու համար:

Յովհաննէս Գանձակեցի իրազգաց լինելով այն խորհրդին յայտնեց եպարքոսին, և նորա հրամանով՝ լատինամիտների խորհրդի գլխաւոր Սարգիս Աւգոկիացի, Յովհան և Նրեմիա եպիսկոպոսներին լաւելեացն կալանաւորեց: Հայ պատրիարքարանից անկախ կրօնապետ կամ պատրիարք լինելու յոյս տածելով՝ Մամոտը կամ Մերտինի Մելքոն եպիսկոպոսը, որ առանձին համայնք ճանաչուելու համար գլխաւոր դրգիչն էր, երբ լսեց այս՝ ժողովելով իւր համամիտ լատինամիտներին, հաստատ որոշում դրեց, որ գնան եպարքոսի ատենանը ու բողոքեն Հայ պատրիարքի վերայ՝ թէ նա իրանց երեք կարգաւորներին բանտարկել է, և խնդրեն՝ որ պատրիարքը պաշտօնանկ լինի, կամ այլ ոք իրանց պատրիարք նշանակուի. սակայն երբ պէտք է եպարքոսի մօտ գնային՝ Մելքոն եպիսկոպոս վատարար թաք կացաւ լատին եպիսկոպոսի մօտ. եպարքոսը իւր մօտ խմբուած ժողովրդին ասաց որ կալանաւորեալները Նրուսաղէմի ինչ և իցէ գործի համար են կալանաւորուած և կարձակուեն երբ նոյս ընկեր Մելքոն եպիսկոպոսը, Յովսէփ վարդապետը և Աստուածատուր քահանան ևս կրներկայանան:

Փողովուրդը երկու օր որոնելուց յետոյ, մեծապէս գայթակորուած Մելքոն եպիսկոպոսի ու նորա ընկերների վերայ՝ դիմեց լատին եպիսկոպոսին և նորանից խստիւ պահանջեց Մելքոն եպիսկոպոսին ու նորա ընկերներին, Աստին եպիսկոպոսը պարտաւորեալ ժողովրդի զայրոյթից՝ կատարեց ժողովրդի ցանկութիւնը, իսկ ժողովուրդը հանեց նոցա եպարքոսի ատենանը՝ որ իւր խստամտն համեմատ հրամայեց առաջուց բանտարկեալ Սարգիս Աւգոկիացի, Նրեմիա և Յովհան եպիսկոպոսին բերել յատենան. Սարգիս և Նրեմիա առ ահի բանտից դեռ դուրս չեկած՝ մահմետականութիւն ընդունեցին, իսկ Յովհան ներկայանալով ատենին Մելքոնի և իւր միւս ընկերների հետ՝ որպէս գաղտնի խորհրդի պարագլուխ, և ժողովրդին իւր մայրենի եկեղեցուց ու ազգային պատրիարքարանից ապստամբեցնող՝ դատապարտուեց ի ծառա-

յու թիւն թիոյ ցմահ:

Յովհաննէս Կանձակեցի գաւառաց լատինամիտներին և ս հաւրածելու համար հրովարտակ ստանալով՝ գաւառներում և ս հաւրածանք սկսեց: որով կասկածաւոր բազմաթիւ մարդիկ, աշխարհականք և հոգեւորականք արսորման և այլ չարչարանքի ենթարկուեցին:

Աստուածատուր կաթուղիկոս Համագանցի այր հոգեւորիկալ և հեղաբարոյ *) 1715 թուի Մայիսի 7 ին յաջորդելով Աղէքստոնդրին, Էջմիածնի աաճարք ներքուսս սպիտակացրեց և սս'կղօծ նկարազարդեց: Ս. Էջման տեղի մն բմարսնեայ գեղեցիկ և նկարէն գմբէթը շինեց չորս սեան վերայ, մարմարեայ քարով պատեց աւագ սեղանի բեմի ճակատը, եկեղեցու աւլայտտակը և չորս սիւները նորոգեց, և այլ և այլ շինութիւններ արեց:

Աստուածատուր Համատանցի մինչ զբաղուած էր Ս. Էջմիածնի մէջ շինութիւններ անելով, Կ. Պօլսեցիք տեսնելով որ Երուսաղէմայ փոխանորդ կարգուած աշխարհական Պատպ կոչեցեալ տեղակալների ձեռքով Երուսաղէմի ազգային սեպհականութիւնները ձեռքից գնումեն՝ Ս. Կարապետի միաբան Յովհաննէս վարդապետ Բաղիշեցուն կարգումեն Երուսաղէմայ փոխանորդ, բայց կարճ ժամանակից յետոյ նորից աշխարհական փոխանորդ կարգուածները տիրապետելով Երուսաղէմայ պատրիարքական գործերին՝ շուտով ազգային սեպհականութիւնները գրու գնելով կորուսեան վտանգին են հասցնում: միաբանք տեսնելով այս՝ երաշխաւոր տալով Յովհաննէս Բաղիշեցուն՝ ազաչումեն պարտատէրներին ժամանակ տալ:

Յովհաննէս Բաղիշեցի Կոլտ մականուանեալ զիմումէ Կ. Պօլսի իրաց դարման մատուցանելու. Յովհաննէս պատրիարք Կանձակեցի կամովին հրաժարվումէ պատրիարքութիւնից և ազգային հաճութեամբ Յովհաննէս Կոլտ ընտրվումէ Կ. Պօլսոյ պատրիարք, որպէս զի նա ըստ իւր նկատողութեան Երուսաղէմում և ս պատրիարք կարգելով մէկին, յաջողի Երուսաղէմայ պարտքը վճարել և ազգային սեպհականութիւնները ազատել կորուստից: Յովհաննէս Կոլտ 1715 թուին յանձն է առնում այս առաջարկու-

(*) Ղազար Զահեցի. «Գրախոս ցանկալի. » Եր. 606. Սիմէօն կաթուղիկոս. Զամբո Եր. 27.

Թիւնը՝ ժողով է կազմում և Երուսաղէմայ պատրիարք ընտրել տալով իւր ընկեր ու Մշոյ Ա. Կարապետի վանահայր Գրիգոր վարդապետին՝ գնումէ Աղրիանուպօլիս և եպարքոսից ստանում է իւր Կ. Պօլսոյ և Գրիգորի՝ Երուսաղէմայ պատրիարքութեան հրովարտակները: Եւ որովհետեւ կասկածուէր թէ Գրիգոր իւր յատուկ համեստութեամբ չի յանձն առնել Երուսաղէմայ պատրիարքութիւնը՝ սպաշանաց թուղթ է գրում՝ Աստուածատուր կաթուղիկոսին որ՝ նաև ստիպէ Գրիգոր վարդապետին յանձն առնուլ Երուսաղէմայ պատրիարքութիւնը: Աստուածատուր կաթուղիկոս սիրով և ուրախութեամբ ընդունելով իրան եղած առաջարկութիւնը հարկեցուցիչ հրամանով պատուիրում է Գրիգոր վարդապետին գնալ Կ. Պօլիս և ստանձնել Երուսաղէմայ պատրիարքութիւնը:

Գրիգոր հնազանդելով ազգի ձայնին և հայրապետի պատուէրին՝ գնում է Կ. Պօլիս և, մինչև որ ինքն Յովհաննէս Կոլոսի հետ հարկաւոր կարգապարութիւնները կանէր՝ փոխանորդ կարգելով Հաննէ կամ Յովհաննէս վարդապետին ուղարկում է Երուսաղէմ և այնուհետև շղթայ ի պարանոցի սկսում է Երուսաղէմայ պարտքի համար հանգանակութիւն անել: Հանգանակեալ զրամներով ոչ միայն Երուսաղէմի՝ Պապա կոչեցեալ աշխարհական փոխանորդների պարտքն է վճարում, և գրաւ գրած սուրբ անօթները ազատում, այլ և զանազան շինութիւններ է անում և ընդարձակ կալուածներ ձեռք բերում Բերիայից սկսեալ մինչև Եգիպտոս: Երախտագէտ Երուսաղէմացիք Գրիգոր շղթայակիրին Ս. Պատարագին « Առաքելոց » ի մէջ յիշատակում են յայտօր *): Կ. Պօլսոյ պատրիարք Յովհաննէս Կոլոս համանման իւր շղթայակիր ընկերին փրաշինեց Կ. Պօլսոյ արուարձան Օրթագեղի, Ալալաթիոյ, Պալատի և Սամաթիայի եկեղեցիքը, Իւսկիւտարում մի դպրոց բաց արեց և կարգաւորեց Կ. Պօլսոյ պատրիարքարանը:

Յովհաննէս Կոլոս շատ աշխատեց սիրով և խաղաղութեամբ երկպառակութեան որովք մէջից բառնալ՝ յորդորելով լատինամիտներին չը հեռանալ մայր եկեղեցուց և տեղի չըտալ շփոթու-

(*) Յաջորդութիւն պատրիարքացն Երուսաղէմի, եր. 60—61, Յառաջ Ս. Էջմիածնում ևս « Առաքելոց » ին յիշվում էր Փիլիպպոս կաթուղիկոսի անունը, որ դարարեց Հանգ. Գէորգ Գ. կաթուղիկոսի օրով:

Թեան. խնդրեց լատին եպիսկոպոսից՝ որ նա պատահառումն չբաժնէ հայ ժողովրդի մէջ թուրքաբնակներին գէղ ի լատին եկեղեցիին հրապուրելով, բայց տեսնելով որ իւր խաղաղասիրական ընթացքը ոչինչ չէ օգնում գործին՝ սկսեց իւր նախորդների ձեռով հալածանք ընդդէմ լատինամիտների բոլոր Սամսնեան պետութեան մէջ:

Մինչ Տաճկաստանի հայք ալէկոծվու մէին կրօնական վէճերով, Պարսկաստանի հայքն ևս տուայտումէին հարատահարութեանց և գերութեանց մէջ. որովհետև Ալուանք ապստամբելով Պարսկաստանից և յաղթանակելով՝ Պարսից մայրաքաղաքում թագաւարեցին: Այս անիշխանութեան ժամանակ լեկզբ սկսել էին ասպատակել Հայաստան և Վրաստան. և մինչ Պարսից գահազուրկ արքայորդի Շահ - Թամազ հասնելով Նախիջևան և իւր մօտ կանչելով Աստուածատուր կաթուղիկոսին զօրաժողով էր լինում, Սամսնեցիք ևս գիպող առիթ համարելով Պարսկաստանի խռովութիւնները, յարձակուեցին Հայաստանի և Վրաստանի վերայ, և արեցին Երևան, Խոյ, Սալմաստ, Գալրէժ, Թիֆլիզ և Գանձակ քաղաքներին մեծամեծ նեղութիւններ և տուապանք պատճառելով ժողովրդեան՝ որ մեծ մասամբ հայեր էին. Աստուածատուր կաթուղիկոս հայ ժողովրդեան սփոփելու և դիւրութիւն լինչ մատուցանելու համար աստանդումէր Վրաստան, Նախիջևան և Եջմիածին երթեկելով: Թափառման ժամանակ Աստուածատուր կաթուղիկոս 1725 թուին Հոկտեմբերի 10 - ին Սշականում լինելիս՝ լուսնի խաւարումը լայնագիր պատահանից նկատելու ժամանակ՝ վայր ընկաւ և չորս ժամից յետոյ վախճանուեց, որի մարմինը բերուելով Եջմիածին՝ թաղուեց Ա. Հախիսիմէի վանքում:

Աստուածատուր կաթուղիկոսի մահուան լուսն անհելով Յովհաննէս Կոլոտ, որովհետև Եջմիածինն ևս Տաճկոց իշխանութեան տակ էր ընկել, ինքնին առանց Եջմիածնեցւոց հարչնելու՝ ժողով կազմեց Կ. Պօլսում և Գաղատիոյ արքեպիսկոպոս Կարապետ վարդապետ Ունեցուն կաթուղիկոս ընտրեց: Կարապետ Աւնեցի մեծ պատուով Կ. Պօլիս հրաւիրուեց և յարքունուստ հրովարտակատանալուց յետոյ*), 1726 թուի Փետրուարի 27 - ին մեծիպահոց

(*) Այս հրովարտակր ստացուեց Կ. Պօլսոյ պատրիարքի ձեռքով, որով և սովորութիւն մնաց, որ կաթուղիկոսները պատրիարքի միջոցով պիտի

երկրորդ կիւրակէին կաթուղիկոսական սուրբ օծումն ընդունեց և մի քանի օրից յետոյ անգղոյն պատրիարք Յովհաննէս Կոլոտին եպիսկոպոս ձեռնադրեց:

Կարապետ Գ. կաթուղիկոս Կ. Պօլսում ժողով գումարեց և Երուսաղէմոյ պատրիարքութեան համար նշույթով սոյն երեք կանոնները սահմանեց՝ որք են.

Ա. Եթէ մէկը Երուսաղէմում սնուած և վարժուած չըլլնի, իրաւունք չունի Երուսաղէմոյ պատրիարք լինել:

Բ. Ո՛չ մի առաջնորդ (պատրիարք) աշխարհական վերակացու չընշանակի Երուսաղէմոյ վերայ:

Գ. Երուսաղէմոյ և Կ. Պօլսոյ պատրիարքութիւնը մի մարդու չը տրուի, կամ պատրիարքութեան հետ ուրիշ առաջնորդութիւն:

Կարապետ կաթուղիկոսը 1727 թուին դուրս եկաւ Կ. Պօլսից և այցելելով Բրուսայ, Անկիւրիա ու Եւզոսիա քաղաքները՝ 1728 թուի սկիզբներին ժամանեց Ս. Էջմիածին և մի քանի հարկաւոր շինութիւններ արեց:

Աւագ սեղանի ճակատին՝ գեղեցիկ գոյներով նկարել տուեց 12 առաքելոց պատկերները, լինելով յորդեյի յաչս տաճիկ տիրապետողաց՝ Երեւնում Մելիք Յակոբը — ջանին ազատեց կախաղանից: Կարապետ երեք և կէս տարի վարելով կաթուղիկոսական իշխանութիւն՝ 1730 թուին Հսկանմբերի 2-ին վախճանուեց և թաղուեց Ս. Հռիփսիմէի գաւթի ձախ կողմը:

Կարապետ Գ. Աւնեցուն յաջորդ ընտրուեց Աբրահամ Բ. Խօշաբեցի, որ Մշոյ Ս. Կարապետի վանահայր լինելուն համար Մշեցի և ս է կոչվում: Աբրահամ Բ. այր տառքինի և ճգնաղգեաց՝ շինեց երկու սեղան Էջմիածին տրեւելեան սրմին կից, աւագ սեղանի աջ կողմը յանուն Արգւոյ Արտոման և ձախ կողմը՝ յանուն Ս. Առասուորչի, սրոնց բեմերի ճակատները զարդարեց մարգարէից պատկերներով, Էջմիածնի տաճարի սիւների ու սրմերի պատկերները նկարել տուեց, խարտեալ քարով փանաւուն և այլ պիտանի շինութիւններ արեց և վախճանուեց 1734 թուին Նոյեմբերի 11-ին:

սկսէին Օսմանեան արքունեաց հետ յարարերութիւն. իսկ պատրիարքները իրանց այս արտօնութիւնը շատ անգամ ի շարն էին դորձ դնում՝ չընկալայցնելով կաթուղիկոսի առաջարկութիւնը ուր հարկն է. կամ եղած շնչին ծախսի տեղ՝ նշանաւոր գումար պահանջելով, Ջամբու, Կր. 29 զլ. ԻԲ. Կր. և 234—249:

երբ Տաճկաստանում հալածանքը սատակացած լինելով ընդդէմ լատին-ամիսների, Գաղղիացւոց և Գերմանացւոց զեապանները միջամտեցին և պարտաւորեցրին եզարքոսին դադարեցնել հալածանքը սպառնալով՝ հակառակ դէպքում խզել բարեկամական յարաբերութիւնը:

Գ. Լ. Է.

Աբրահամ Բ. - ին յաջորգեց Թրակիոյ (Թէքիրգաղ) առաջնորդ Աբրահամ Կրետացի, որ ի կենդանութեան Աբրահամ Բ. - ի ուխտ եկած լինելով Էջմիածին, շատ հաճելի եղաւ Աբրահամ կաթողիկոսին և մնաց Էջմիածնում: Աբրահամ Բ. - ից յետոյ Էջմիածնի միաբանքը Աբրահամ Կրետացուն ընտրեցին և օծեցին կաթողիկոս 1734 թուի Նոյեմբերի 22 - ին. և սրովհետեւ Էջմիածինը նորից Պարսից իշխանութեան աակ էր ընկել, ուստի Պարսից արքունիքից կաթողիկոսական հրովարտակ ստանալուց յետոյ, Կ. Պօլսոյ աղգայնոց ծանուցին և Տաճկոց արքունիքից ևս հրովարտակ ստացան:

Աբրահամ երկու տարի հինգ ամիս միայն կարողացաւ վարել կաթողիկոսական իշխանութիւնը, իսկ այս կարճ ժամանակին թէ և չը կարողացաւ Էջմիածնում շինութիւն ինչ անել, բայց բընաւոր Թահմազ - Ղուլի խանի իբրև սիրելի, միշտ նորա մօտ գտնուելով՝ մեծամեծ բարիքներ արեց քրիստոնէից և շատ գերիներ ու շատ մահապարտներ ազատեց: Աբրահամ Գ. ի կողմանէ Հայոց՝ ներկայ գտնուեց Մուղանի դաշտում Թահմազ - Ղուլի - խանի կամ Նադիր - շահի գահակալութեանը, մանրամասն նկարագրեց թէ այդ և թէ պարսկական այլ արարողութիւնները*): Աբրահամ կաթողիկոս 1737 թուին Ապրիլի 18 - ին վախճանուեց և թաղուեց Շողակաթի գաւթում՝ ձախ կողմը:

Մինչ Աբրահամ Գ. Կրետացի Նադիր - Շահի բանակում տուայտումէր, Տաճկաստանում նորից սկսեց հալածանք, և Գաղղիացւոց ու Գերմանացւոց զեապանները լատին եպիսկոպոսի հետ միացած՝ սկսեցին առանձին եկեղեցի ունենալու համար զրամ հանգանակել լատին-ամիսներից, ընդդիմացողներին զրկելով եկե-

(*) Աբր. կաթողիկոս Կրետացի տպեալ ի Ս. Էջմ. ի 1870 ամի:

դեցւոյ հաղորդակցութիւնից: Այս բանը Յովհաննէս պատրիարք յայտնեց եպարքոսին և նորա հրամանով շարունակեց հալածանքը:

Բայի ներքին այս խռովութիւնից՝ Հայք պարտաւորուեցին զինուել Յունաց գէմ և ս, որոնք կամենումէին Երուսաղէմայ Ա. Յակովբեանց վանքը յափշտակել: Հայք պարտաւորուեցին զիմել նոյն Գաղղիացւոց զեպանի օգնութեանը և յաջողեցին նորա ձեռքով վերապահել Ա. Յակովբեանց վանքի վերայ իրաւասութիւնը: Գաղղիացւոց զեպանի նախաձեռնութեամբ առ ժամանակ մի հանգարտեց հալածանքը և վէճը կաթողիկոսութեան մասին: Մինչև անանգամ՝ Յովհաննէս Կալոս զիջաւ գաղղիացւոց զեպանի առաջարկութեանը, « Ով հրաշալի նախահարք, շարականի Քաղկեդօնի մասին եղած կտորը չհրգել:

Արտահամ Կրետացու մահից յետոյ Էջմիածնի միաբանք ժողով գումարեցին և Երուսաղէմայ պատրիարք Գրիգոր շլթայակիրին ընտրեցին կաթողիկոս, բայց ոմանք ևս Էջմիածնի նախրակ և Զմիւռնիոյ առաջնորդ Ղազար Զահկեցուն կամենալով կաթողիկոսացնել՝ Գրիգորի ընտրութեան թուղթը Կ. Պօլիս ուղարկելիս՝ Ղազարի համախոհների թուղթն ևս ուղարկեցին, որի մէջ Ղազարի անունը ոսկեգօծ տառերով էր գրուած:

Յովհաննէս պատրիարք Կալոսն ընդունելով Էջմիածնի թղթերը, ժողով գումարեց Կ. Պօլսում. Գրիգոր պատրիարքի ընտրութիւնը այս ժողովին ևս հաճելի եղաւ. բայց ինքն Գրիգոր պատրիարք, որ Կ. Պօլսումն էր Երուսաղէմայ գործերի համար, նկատելով որ Էջմիածնի միաբաններից ոմանք Ղազարին են կամենում՝ երկպառակութեան տեղի չըտալու համար՝ հրաժարուեց և Ղազար հըռչակուեց կաթողիկոս:

Ղազար Զահկեցի իւր ընտրութեան լուրն առնելով՝ ընդ ցամաք յուղի ընկաւ մեծաշուք փառքով գնալ Էջմիածին: Կարնոյ կուսակալը տեսնելով Ղազարի մեծաշուք ուղևորութիւնը և իմանալով որ կաթողիկոսութեան հրովարտակ չէ ստացել յարքունուտ՝ արգելք եղաւ նորա ուղևորութեանը և ամբաստանեց դէպ ի արքունիք, ուստի և Ղազար մնաց Կարնում, յուսալով նաև ստանալ Յովհաննէս պատրիարքի ձեռքով հրովարտակ:

Այս ժամանակ Ղազար թանկագին ընծաներով շահելով կուսակալի կամքը՝ ազատօրէն եկեղեցի էր գնում, քարոզումէր ժողովրդեան և պատուհասում լատինամիտներին. տեղւոյն առաջնորդ

Ահագին կոչեցեալ Սահակ վարդապետը ներկայութեամբ Ղազարի իւր այնտեղ մնալը աւելորդ համարելով՝ գնաց Բասենու կողմերը Երուսաղէմայ համար նուիրակութեան: Յանախնկալս Կարնոյ կուսակալը մեռաւ. զրոյմամբ լատինամիտների տեղւոյն թուրք մեծամեծները ատեան կազմեցին ըստ երդման, որով մահ էին սահմանել լատինականութեան համար վէճ յարուցանողին, վճռեցին Ղազարին սպանել, բայց Ղազար հաւատացնելով թէ լատինամիտների հալածանք յարուցանողը տեղւոյն առաջնորդ Սահակ վարդապետն է եղել, ինքն մեծամեծ ընծաներով ազատուեց և շտապաւ հասաւ Էջմիածին 1738 թուին, ուր և կաթողիկոսական օժումն ընդունեց:

Ի հետեւանս Կարնոյ կուսակալի ամբաստանութեան, եզարքսի հրամանով սուրհանդակներ եկան Կարին Ղազարին կալանաւորելու, բայց նորան այնտեղ չը գտնելով՝ գնացին Բասեն Ահագին Սահակ վարդապետին կալանաւորեցին և բերելով Կարին շղթայակապ բանտարկեցին, որից ազատուեց բաւական դրամներ ծախսելով:

Սահակ Ահագին սկսեց վատաբանել Ղազար Չահկեցուն և մինչև անգամ համարձակուեց բանադրել, որով մեծամեծ խռովութեան տեղի տուեց, մինչև որ Արրահամ կաթողիկոսից Կ. Պօլսոյ նուիրակ կարգուած Անթապցի Պետրոս վարդապետ Քիւթուր և Աղէքսանդր վարդապետ Բիւզանդացի վերադառնալիս՝ Ղազարի հաշուում վճարեցին Սահակին նորա բանտարկութիւնից ազատուելու համար արած ծախսերը և հաշտեցրին Ղազարին Սահակի հետ և Սահակին՝ ժողովրդեան հետ:

Շուտով Ղազարի և պարսիկ մեծամեծների մէջ գժտութիւն ընկաւ և Ղազար մեծաբանակ առգանք վճարելուց յետոյ 1740 թուին կոչուեց արքունիք, ուր շարաշար պատուհասակոծ եղաւ և բանտարկուեց, իսկ կաթողիկոսութիւնը տեղակալութեան անուամբ յանձնուեց Ագուլեցի Յովհաննէս վարդապետին, սակայն Ղազար իւր եղբոր ձեռքով ազատուելով բանտից հնգամսեայ սքսորումից յետոյ՝ դարձեալ սկսեց վարել կաթողիկոսութիւնը:

Ղազար երբ գնացել էր ներկայանալու Նատիր - Չահին, նորա գործակալները թէ միաբաններն և թէ գիւղացւոց հետ խռովութեամբ վարուելու համար յանդիմանուած Պետրոս Քիւթուրից և Աղէքսանդր Բիւզանդացուց՝ ոխ ունէին նոցա դէմ, ուս-

որի երբ վերադարձաւ Ղազար՝ վրէժ լուծելու համար յայտնեցին նորա թէ, Պետրոս Քիւթուր և Աղէքսանդր Բիւզանդացի կաթուղիկոսական իրաւունք էին բանացնում և նորան գազընկէց անելու համար չարախօսութիւն են գրել Նազիր շահին ու Կ. Պօլսոյ մեծամեծներին: Ղազար, որ պիպոյ առիթ էր փնտռում Պետրոս Քիւթուրին իւր համախոհ Աղէքսանդր Բիւզանդացու հետ սրատեղի, նորա ապարդիւն նուիրակութեան համար, բարկացած՝ սատակի գանակոծելուց յետոյ երեսուն օր բանտարկեց երկուսին և ս, նոցա ինչքը գրաւեց, և մեծամեծ տանջանքներ տալուց յետոյ 1746 թուին Քիւթուրին Սեան սքսորեց, որտեղից նա վեց ամսեայ տաժանելի խտմբերութիւնից յետոյ մի գիշեր մակոյկ մի գտնելով կղզու մօտ, ծածուկ փախաւ գնաց Կարս, այն տեղից Կարին, և վերջապէս Կ. Պօլիս՝ Ղազարի խուզարկութիւնից ազատուելու համար:

Ղազար Քիւթուրի հետ չարայար փարուելուն համար՝ բաւական կորցրել էր իւր համարումը, Երեւանի մէլիքները (աւագները) արդէն գժտուել էին նորանից, և կասկածելով թէ մի գուցէ նա իրանցից և ս չարախօսէ դէպ ի շահը, իրանք շտապեցին և յայտնեցին՝ որ մի յանցաւորի յարքունիս գրուած ինչքից չորս հազար թուման Ղազարի մօտ է:

Ղազար յարքունիս կոչուելով և առ ահի չրկարողանալով բացասել, պարտաւորուեց վճարել յիշեալ 4000 թումանը, և 1500 թուման և ս աւելի տուժել: Ղազար Եջմիածնի օսկեղէն և արծաթեղէն անօթները վաճառելով 2000 թուման առեց հարկապահանջին, մնացեալը ծածուկ ուրիշ տեղ տանել առեց ու ինքն 1747 թուին փախաւ Կարին, այնտեղի կաթուղիկոսական իշխանութիւնը փարելու մտքով, բայց լսելով թէ Եջմիածնի միաբանք հարկահանի խոշտանգանքից ազատուելու համար ծանր տոկոսօք դրամ փոխ առնելով ուրիշներին՝ լիովին վճարել են իւր պարտքը, հաճելով Երեւանայ իշխողի և այլ մեծամեծների կամքը վերադարձաւ Եջմիածին: Միաբանք, որ արդէն բողոքել էին ազգին Ղազարի փարմանց մասին, յուսալով թէ իրանց վերայ ծանրացած պարտքը կը վճարի՝ ահամայ ընդունեցին նորան, բայց նա ոչ միայն պարտքը չը վճարեց այլ աւելի և ս պարտքի ենթարկեց նոցա: Եւ որպէս զի միաբանք միջոց չունենան միմեանց հետ խօսելու՝ ամեն մէկի վերայ պահապան դրեց և փակեց նաև վանքի դռն-

րբ, որ նորա միջոց չունենան իրանց կացութիւնը որիչին յայտնելու:

Այս ժամանակ Կ. Պօլսեցւոց յանձնարականով Պետրոս Քիւթուր և Սահակ Ահապին բարեկարգութիւն անելու, կամ ըստ հաւանութեան միաբանից նոր կաթուղիկոս ընտրելու համար հասան Էջմիածին և դռները փակ գտնելով՝ գնացին Երևան: Ապա զար լսելով Պետրոս Քիւթուրի և Սահակ Ահապինի գալուստը, տեղեկագրեց Գալրիփու մեծ իշխանին թէ նորա տաճկաց յրատեներ են, և եկել են կաթուղիկոսութիւնը իրանից յափշտակելու: Գալրիփու խանը գործը հանգամանօրէն ստուգելով, գրեց Երևանայ խանին, որ նա ժողովէ Էջմիածնի միաբանութեան, և ում որ միաբանութիւնը կը կամենայ՝ նորան հաստատէ կաթուղիկոս: Միաբանք երբ հրաւիրուեցին Երևանայ խանի առաջ՝ նոր կաթուղիկոս խնդրեցին, ուստի և խանը Ապարին ուղարկեց Անան յարգելանս, իսկ միաբաններին թոյլ տուեց Քիւթուրին կամ Ահապին ընտրել կաթուղիկոս: Միաբանք կամեցան Սահակ Ահապին կաթուղիկոս ընտրել, բայց երբ նա հրաժարուեց՝ Պետրոս Քիւթուրին ընտրեցին: 1718 թուին օծեցին թուելով Ապարի ապօրէն գործերը՝ բանադրելով նորան շրջաբերական գրութեամբ ամենայն տեղ յայտնեցին Պետրոսի կաթուղիկոսութիւնը:

Ապար իւր բարեկամները շնորհիւ շուտով ազատուեց Անանս արգելանքից և ստանձնելով կաթուղիկոսութիւնը, Պետրոս Քիւթուրին, նորա տասնամեայ կաթուղիկոսութիւնից յետոյ, ուղարկեց Ջահուկ ուր և վախճանուեց նա:

Ապար իւր խռովայոյզ իշխանութեան ժամանակ, շինարար մարդու կատարեալ յատկութիւնն ունենալով՝ շինեց Էջմիածնում այժմեան Ահհարանը, Ահհարանի գաւթի հիւսիսային կողմը Քանապի կոչեցեալ միայրիկ շինութիւնը կաթուղիկոսների ձմեռուայ բնակութեան համար, Ահհարանի բազի հօրաւային կողմը՝ ներսի Ապարապատ կոչեցեալ շինութիւնը՝ պատուաւօր հիւրոց համար և Ապարապատը՝ հասարակ հիւրոց համար, և 1751 թուին վախճանուելով՝ թաղուեց Ս. Գայիանէի վանքի գաւթում, ուղ կողմը:

Ապարի կաթուղիկոսութեան առաջին տարիներում մինչ կենդանի էր Յովհաննէս Աղոս պատրիարք, լատինամիտների և հայաբաւան հայերի մէջ խաղաղութիւն հաստատելու և լատինա-

միտներին մայրենի եկեղեցուց չը հեռացնելու համար շատ ջանքեր եղան. Գաղղիացուց դեսպանը հայ պատրիարքարանի միտքը շահելու և հայ ժողովրդեան վերայ ազդեցութիւն գործելու համար շարունակումէր բարեկամութիւնը հայ պատրիարքարանի հետ: Այս լաւ յարաբերութիւնից կամելով օգուտ քաղել Երուսաղէմայ պատրիարք Գրիգոր շլթայակիր, և հայ մեծամեծները Երուսաղէմայ ազգային սեպհականութեանց հաստատուն իրաւունք ստանալու համար՝ դիմեցին Գաղղիացուց դեսպանին, որ յաջողեցրին հրովարտակ դուրս բերել թէ Հայերը, Յոյները և Լատինները ինչ սեպհականութիւն որ ունեն Երուսաղէմում՝ առանց վէճի՝ ամեն մէկինը ընդմիշտ իրան մնայ. այսպէս Ա. Յակոբայ վանքը, որ կամենումէին Յոյնք յափշտակել, ընդ միշտ Հայոց մնաց:

1741 թուին վախճանուեց Յովհաննէս կոլոտ և յաջորդեց իւր ուշակերտ Յակոբ վարդապետ Նալեան Ակնայ Զիմարա գիւղից: Միակ խնդիրը, որ յուզվումէր Կ. Պօլսում և գաւառներում էր լատինամիտ հայերի խնդիրը: Լատինամիտ հայերը չընայելով պատրիարքարանի խաղաղասիրութեան՝ զրդուած լատին եպիսկոպոսից և պաշտպան ունենալով Գաղղիացուց դեսպանին, ամեն ջանք գործ էին դնում ոչ միայն հայ պատրիարքարանից անկախ գրութիւն ստանալ, որ հակառակ էր նաև կառավորութեանը, այլ և մտածումէին հայ եկեղեցիներն ևս գրաւել և մինչև այս յաջողելը հայ եկեղեցի չը գնալու համար ժամերգութիւնը կատարումէին՝ ուր պատահումէր—տանը պանդոկներում՝ խաներում և ըն: Գաղատիոյ լատինամիտ հայերը մինչև անգամ յափշտակեցին Անկիւրիայի Հայոց չորս եկեղեցիքը, որ Յակոբ պատրիարք նորից Հայոց վերադարձրեց:

1749 թուին ոմն Պրոխորոն վարդապետ գալով Կ. Պօլսի հակառակ ժողովրդեան կամոց՝ ետարքոսի հրամանով յափշտակեց պատրիարքութիւնը: այս պատճառով մեծ խռովութիւն յուզեց, մինչև լուրը հասաւ թագաւորին, խկ թագաւորը բարկացաւ ետարքոսի վերայ՝ ժողովրդի կամքին հակառակ պատրիարք կարգելուն համար, ուստի և Պրոխորոն 7 օրեայ խռովայոյզ պատրիարքութիւնից յետոյ պաշտօնանկ եղաւ, և Հայք Յակոբի վերաին ընտրութիւն գժպատեհ համարելով՝ 1749 թուին պատրիարք ընտրեցին Ա. Կարապետի վանահայր Ակնեցի Մինաս

վարդապետին, և որովհետև այն օրերին վախճանուած էր Երուսաղէմայ պատրիարք Գրիգոր շղթայակիր, (թէև տեղւոյն միաբանք նորա Թորոս աշակերտին էին ընտրել պատրիարք), Կ. Պօլսեցիք Յակովբ Նալեանին ընտրեցին և ուղարկեցին Երուսաղէմ:

(Եպիստոլէս)

Յ. Վ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐԸ ԱՍԻԱՅՈՒՄ.

Հայերի բարոյական ինքնագոյութիւնը: Որպիսի եղանակաւ Հայերը պահպանեցին իւրեանց բարոյական ինքնագոյութիւնը, — Հայերի ընդարձակ կտպերը Ասիական ժողովուրդների հետ ընդարձակեցին նրանց պատմութեան սահմանը:

« Եւնք շրջումներ տէրութիւնների և ազգերի աճիւնի մէջ, » ասաց մի գրող: Ազգու ճշմարտութիւն, հաստատուած դարաւոր դէպքերով: Բայց անհերքելի է և այն, թէ կան աղբեր, որոնք զանազան փոփոխականութիւնից, թէպէտ և ենթարկուեցին իրանց հայրենի սահմաններում օտար ու բռնակալ իշխանութեան լուծին՝ ի վերայ այս ամենայնի ամբողջ դարերի տեղականութեանց մէջ պահպանումն ո՛չ միայն անունը, այլ և իրանց բարոյական գոյութիւնը, լեզուն և հաւատը, և իղձ՝ կենդանանալու նախնական գոյութեամբ: Այս ազգերի դասակարգում Հայերը նշանաւոր աստիճան են գրաւում: Չնայելով Ասիայի, երեք հազար տարուց աւելի, փոթորկալից մակընթացութիւնով, Հայաստանի վերայ ներգործող յուզմունքների վերայ, Հայերը լիովին հայեր մնացին: Նրանց բարբառի վստահութիւնը, համապատասխան գերազանց մտքերին, զանազանվումէ բոլոր արեւելեան լեզուներից առանձին իմն ազգութեամբ և դիտութեանց և արուեստից անուանակոչութեամբ (*), Հնարագործ մտք շարժողութեան մէջ դնելով վաճառականութիւնը Ասիայի զանազան եղերաց մէջ, նոքա Հինդկաստանում անգամ յարգանք են աղյուսում դէպի արեւմամբ քարոզեալ կրօնը:

Դիտելով աշխարհագրական քարտէսների վերայ երկրների սահմանները, մենք չըզոք է զարմանանք նրանց ընդարձակութեամբ, որովհետև ներքինը և ոչ արտաքինը կայացնումէ տէրութիւնների ոյժը: Հուսկ յետոյ, որպէս շատ անգամ արտաքին մեծութիւնը փոխվումէ գերեզմանական փոշու: « Աւելի երկրներում, ասումէ Հիւսիս-արեւմտ, ծանրաբեռնուած բռնկութեամբ, ոչ սակաւ և ամենաճաղկած երկիրները անմուռնչ անապատների

(*) Անկէտիլ, մասն 2, եր. 375: